հառնող հատիկն է։

4. Գորգ-գորգագործության տերմինաբանությունը որպես գորգի հայրենիք ակնարկում է Հայաստանը /գորգի հոմանիշներ՝ կուրկ/աս/, քուրք գորգի հիմնական տարածքը՝ դաշտ, հող, գետին, տափ, պորտ ևն/։ Գորգի և կապերտի գործվածքի տեխնիկայի հետ միասին մի շարք տերմիններ հայերենից անցել են սեմական, իրանական, իբերակովկասյան, հունական, լատինական, ռոմանո-գերմանական, սլավոնական, թյուրքական լեզուներին /տափ-տապաստակ՝ tapis, teppich, tabasta, tappeto ևն. կապ-կապա-կապերտ-կարպետ՝ aba, akaba, gyabá, capot, carpet. կաճ /թաղիք/՝ qecha. փալաս՝ palas. դիպակ՝ diba, dibag. ջեջիմ՝ jejim ևն/։

5. Որպես գորգի հայրենիք հնագույն գրավոր աղբյուրները մատնացույց են անում Հայաստանը /մթա V դ., մթ I, V դդ./ և Բաբելոնը /մթա V դ./, հնագիտությունը՝ Հայաստանը /մթա XIV- IX դդ., VIII դ., մթ IV դ./, Ալթայը /մթա VI դ., V դ./, Եգիպտոսը /մթ IV դ./, գործիքները՝ Հայաստանը /տորք, իլիկ, կտուտ՝ մթա III - I հազ./, Եգիպտոսը /տորք՝ մթա III հազ./, զարդարվեստը և հորինվածքը՝ Հայաստանը /մթա III - I հազ./ և Միջին Ասիան /զարդարվեստը՝ մթա IV հազ., մթա I հազ./։

6. Աղբյուրների քննությամբ հաստատվում է նաև, որ առավելապես հայերն են եղել գորգագործության տարածողները /Բաբելոն, Եգիպտոս, Եթովպիա, Բյուզանդիա, Պարսկաստան, Իրաք, Սիրիա, Լիբանան, Թուրքիա, Միջին Ասիա, Աֆղանստան, Հնդկաստան, Չինաստան, Արևելյան և Արևմտյան Եվրոպա/։ Հնագույն գորգավաճառները և գորգ նորոգողները դարձյալ եղել են հայերը։

Այսպիսով, փաստերի օբյեկտիվ քննությամբ հերքվում է Կ.Երդմանի դրույթը։ Մեր համոզմամբ հաստատվում է այն տեսակետը, ըստ որի գորգարվեստը հնագույն զարգացած երկրագործություն /մթա VIII- VI հազ./ ուստիև քաղաքակրթություն ունեցող ,,հայկական մշակութային մարզի,, /Ֆ.Գանցհորն/ արգասիք է։ Մի մշակույթ, որի միակ կենդանի կրողը հնագույն ժամանակներից հայ ժողովուրդն է։

Դ.Ս.ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
ՀԱԻ

ՀԱՅՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՑԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՋՈՒԳՈՐԴՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գիտության կոչումն է /ինչպես հայանի է/ մանրազնին հետազո-

տությամբ տար-ալուծել երևույթները՝ ստացած արդյունքները սինթեզելով դրանց բազմակողմանի վերլուծված լիակատար պատկերը տալու նպատակով: Ուստի քննվող երևույթի որևէ կողմի կամ մանրամասնի զանցառումը, ինչ նկատառումով էլ դա արվի, պակասավոր է դարձնում ամբողջի պատկերումը։

1. Ազգագրության հանգուցային հարցերից է ժողովրդական /հիմնականում՝ գյուղական/ բնակարանի և բնակավայրի, որպես պատմա-մշակութային կարևորագույն երևույթների հետազոտությունը։ Այդուհանդերձ, տակավին չեն մշակված ոչ բնակավայրային, ոչ էլ բնակարանային համալիրների բնութագրման համընդհանուր ճանաչման արժանացած տիպաբանական և ծևաբանական սկզբունքներ: Ավելին, նշված համալիրներն ավանդութաբար ներկայացվել են միմյանցից անջատ, որով արհեստական խզում է առաջացել դրանց միջև, քանի որ չի կատարվել դրանց համադիր ու ամբողջական դիտարկում թե տիպաբանական, թե գործառական /Ֆունկցիոնալ/ առումով:

2. Մյուս կողմից էլ, հետազոտողները բնակարանն ու բնակավայրը դիտելով գերազանցապես որպես նյութական մշակույթի բաղկացուցիչներ, ուշադրություն են դարձրել դրանց շինարարական-կառուցողական հատկանիշների տարալուծված ներկայացմանը, հպանցիկ անդրադառնալով թե տան, թե գյուղի սոցիալական գործառության, տնտեսական հատկացելության ու առանձնապես գաղափարական-գեղագիտական դրսևորումների բացահայտմանը, մի կողմից, և դրանց զուգորդված ու ընդհանրացված քննությանը՝ մյուս կողմից։ Պարզա, որը խիստ սահմանափակել է բնակարանա-բնակավայրային համալիրի, որպես մի ամբողջական սոցիալական ֆենոմենի բազմակողմանի խորքային ընկալման և էթնիկ մշակույթի հանուր համակարգում դրա տեղի և դերի բացահայտման հնարավորությունը։

3. Վերն ասվածը վերաբերվում է նաև հայոց բնակարանային և բնակավայրային համալիրների ուսումնասիրությանը։ Հայ մասնագետների /ազգագրագետներ, ճարտարապետներ և այլոք/ մի քանի սերունդների /Ստ. Լիսիցյան, Հ. Ղալփախչյան, Ս. Վարդանյան, Վ. Բդոյան, Դ. Վարդումյան, Ն. Պապուխյան, Յու. Մկրտումյան և ուրիշներ/ ջանքերով բավական հանգամանորեն հետազոտվել է հայոց ավանդութային ժողովրդական բնակարանն իր ենթաէթնիկ /լոկալ/ տարբերակներով, սակայն առկա բնութագրումները, շրջանառության մեջ դրված նյութերը, դիտարկված տիպերը հաճախ համադրելի չեն։ Այդուհանդերձ, դրանք և ~~հետազ~~ հետազոտությունների արդյունքները կարող են բնակարանային համալիրն առաջադրվող տեսանկյունից քննելու և պրոբլեմի նորովի լուծմանը հասնելու շահեկան ատաղձ ծառայել։

4. Ինչ վերաբերում է բնակավայրային համալիրին, ապա այն համեմատաբար նվազ չափով է ուսումնասիրված հայ մասնագիտական գրականության մեջ /Մտ. Մնացականյան, Է. Մելքոնյան/, ուստի պատահական չէ, որ այս բնագավառն արտացոլող նյութերը, հետազոտման սկզբունքներն ու բնութագրումները որոշակիորեն թերի են: Դա մասնավորապես վերաբերում է բնակավայրերի տիպերի ու ձևերի սահմանումներին, բնա-էկոլոգիկ, սոցիալ-տնտեսական, կենցաղա-մշակութային կողմածքների դրսևորումներին և հարակից մի շարք այլ հարցերի: Ըստ այդմ, համաչափ չեն ուսումնասիրված Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջանները թե տարածական և թե ժամանակագրական առումով:

5. Ելնելով վերոբերյալից և գիտության զարգացման արդի պահանջներից, հրատապ պրոբլեմ է դարձել բնակարանային և բնակավայրային համալիրների համադրական ուսումնասիրությունը, որը մեծապես կնպաստի այդ ֆենոմեններից յուրաքանչյուրի, նույնպես և դրանց՝ որպես մի միասնական ֆենոմենի խոր ու բազմակողմանի հետազոտմանը, իսկ դա ենթադրում է թե տեսական և մեթոդական սկզբունքների հստակեցում ու կատարելագործում, թե ճանաչողական /փաստական/ նոր նյութերի ընդգրկում, մի բան, որը կընձեռի և էմպիրիկ, և վերացարկված մակարդակներով երևույթը դիտարկելու հնարավորություն, ստեղծելու տիպաբանական և գործառական բնույթի նոր համակարգեր:

Մ.Գ.ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՀԲ

ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ /XIX դ. վերջ - XX դ. 30-ական թթ./

1. XIX դ. վերջից մինչև XX դ. 30-ական թվականներն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բողոքական միսիոներական ընկերությունների ջանքերով ամերիկահայ համայնքում ստեղծվում է կրոնական, կրթական, հասարակական ինստիտուտների լայն ցանց: Այդ տարիներին բողոքականությունը փորձում է ամրացնել իր դիրքերը հայ մշակույթի մեջ:

2. ԱՄՆ-ի հայ գաղթյալների առաջին սերնդի համար հայ բողոքական եկեղեցին ուներ շեշտված հասարակական դեր, քանի որ այն գործոն միջոց էր արագացնելու և հեշտացնելու հայ ներգաղթյալների համակերպումն ԱՄՆ-ի ուրույն սոցիալ-քաղաքական պայմաններին, ամերիկահայ մշակույթին, բարքերին: Հայ բողոքական եկեղեցին խթանում էր ամերիկահայերի ուծացման գործընթացը:

3. XX դ. 40-ական թթ. ամերիկահայ հասարակության մեջ լայն տարածում ստացած "Triple Melting Pot" տեսությունն այն մասին, թե ներգաղթյալների լիակատար ուծացման ճանապարհը կրոնական ուծացումն է ԱՄՆ-ի երեք գլխավոր կրոնների՝ բողոքականության, կաթոլիկության, հուդայականության սահմաններում, ժխտվեց հենց այն փաստով, որ 30-ական թվականների սկզբից բողոքականության տարածումն ամերիկահայ համայնքում սահմանափակվում է: